



ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

(Պատմական անցյալը և դերը հայոց պատմության մեջ)

«Եկայք շինեցուք սուրբ
գիտրանն լուսոյ...»
(Ծարական)

Դարերի խավարի միջից, մշուշների և տատապանքների միջից մեզ հասած մի հի-նավուրց տաճար է ս. Սարգիսը, պատմու-թյան հուշվույթից մեզ հասած մի լուսավոր խորան, որն իր վրա կրել է օտարի և՛ ոճը, և՛ լուծը, և՛ զարկը: Հոգևած և կքված է նա: Հայոց փստահեղ ճարտարապետության միայն հեռավոր արձագանքներ էին արտա-ցոված իր վրա, հապճեպ շինված, թրժած աղյուսով, խառը լիցքով հաստաքեստ պա-տերը կիսամրոցի տեսք ունեին: Կոպիտ և գեղեցկությունից զուրկ խոճուն կաթուղի-կեն կարծես վախից և արասափից ինքն իր մեջ քաշված-նստած էր այդ հոճ գանգվա-ծային պատերի և սյուների վրա: Բայց դի-մացել է նա դարերի և ժամանակների մա-շեցնող հարվածներից որպես աներկբա վկա հուշի, հավաստի մի ժողովրդի, որը երբեք չի մացավ վհատվել, հատնումի սար-սափը երբեք չունեցավ, քանզի ոտաքոթիկ, արյունոտ և ցնցոտիապատ նա կանգնած էր պատմության քառուղիներում՝ միշտ հարու-թյան իմանալի լույսով ողողված:

* * *

Հին է տաճարի պատմությունը և անցյա-լը:

Նախ տեղը: Հին Երևանը բաժանված էր առանձին թաղամասերի, որոնցից մեկն էր Չորագյուղը, որը կոչվում է նաև «Խնկելոյ ձոր»: Սիմեոն Երևանցի կաթողիկոսն իր «Ջամբո»-ի մեջ մանրամասն տեղեկություն-

ներ է տալիս մեզ Չորագյուղի մասին. «Ի գեողս յայս Չորագեղ, որ կոչի Խնկաձոր, ունի սուրբ Աթոռս զմեծ պարսպապատ տուն մի իր սարօքն, յորում գոն երկու եկեղեցիք, և ...օտայք, ձիատունք, աշխանասյս և այլովք պարագայիք» (Սիմեոն Երևանցի, «Ջամ-բո», էջ 204):

Չորագեղի անապատը բաժանված է եղել երկու մասի՝ հարավային և հյուսիսային:

«Եւ նոյն մեծ պարիսպն երկուս բաժա-նեալ միջնահատ որմով, մին որ ի կողմն հիսիսոյ՝ միով եկեղեցան և այլովք հար-կաոր տամբք՝ է հասարակ միաբանից տե-ղի՝ և անասնոց և այլոց այսպիսեաց, յո-րում եղեալ յեկեղեցին գան ժողովուրդք օտարականք և վաճառականք ի աղօթել... Եւ միսն, որ ի հարաակողն՝ միակ եկեղե-ցան է յատուկ տեղի Հայրապետին, զի ի գնալն կաթողիկոսին ի յերեսան անդ ազա-նի իրովք սպասաւորքն: Որ և ունի գյա-տուկ պարիսպս յատուկ դրամք և արգելեալն ի հասարակութենէ: Այս երկրքեանս ևս՝ որք գոն ի մէջ միոյ մեծի պարսպի, և եւ շէն և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս, կո-չին միով անուամբ Չորագեղու անապատ, որ է հանդէպ բերթին Երևանու ի Հիսիսա-կոյսն, ի բարձրահայեաց գագաթանն մե-ծախոր ձորոյն, ուր անցանի գետն Հրաս-տան» («Ջամբո», էջ 204):

Չորագյուղի անապատը եղել է կաթողիկո-սական իջևանատեղի և աղոթավայր: Նույնն է վկայում Հովն. Ծախաթունյանց եպիս-կոպոսն իր «Ստորագրութիւն կաթողիկէ

Էջմիածնի և ճիւղ գաւառացն Արարատայ՝ արժեքավոր սշխատության մեջ (տե՛ս հատ. 2, էջ 147, ս. Էջմիածին, 1842 թ.):

«Չորագեղի անապատ կոչեցեալ տեղին՝ որ է իջևան կաթողիկոսաց Աթոռոյ Էջմիածնի և տեղին բովանդակ սեփականութիւն նոյն կաթողիկոսական Աթոռոյն Էջմիածնի»:

Մինչև 1827 թվականը Մայր Աթոռն ունեցել է իր ներկայացուցիչ-վարդապետը, որը հսկել է Երևանում Մայր Աթոռի ունեցած կալվածքներին, ջրաղացներին և այլն: 1827 թվականից հետո վերջանում է վարդապետների հաջորդությունը և սկսվում աւտոչնորդական փոխանորդությունը եպիսկոպոսական իշխանությամբ:

Ծախսաթունյան եպիսկոպոսն ավելի պարզեցնում է մեզ Սիմեոն Երևանցու տեղեկություններն իր հավաստի և ականատեսի տեղեկատվությամբ: Պարզվում են Չորագեղի անապատի երեք եկեղեցիների անունները, կառուցման ընթացքը, վերանորոգումները և այլն:

Նախ «անապատում» գտնվող ս. Գևորգ եկեղեցու մասին, որը Սիմեոն Երևանցու ակնարկած կաթողիկոսական եկեղեցին է. «Այս եկեղեցի փոքրիկ յանուն արքայն Գեորգայ գոյր շինեալ յառաջագոյն՝ թերևս լեւիպար կաթողիկոսէ գոր զկնի ի մերում ժամանակի Դաիթ կաթողիկոս էնէկեթեցի նորոգ հիմնարկութեամբ ետ կառուցանել հանդերձ ներքևատամբ ի վիմի անդ» (Ծախսաթունյան եպ., Ստորագրութիւն, էջ 147, հատ. 2),

Ծախսաթունյանը վերոհիշյալ եկեղեցու հիմնադրությունը վերագրում է Եղիազար կաթողիկոսին (1682—1691): Բայց մեզ պարզ չէ, ի՞նչ աղբյուրներից օգտվելով Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն իր «Տեղագիր Գեղարքունիքի Ծովազարդ գավառի» մեծարժեք աշխատության մեջ այս եկեղեցու և «անապատի» հիմնարկեքը հասցրնում է մինչև 1450 թվականը: «Առաջնորդարանս վաղուց անտի եղել է հիւրատուն կաթողիկոսաց և Էջմիածնայ միաբանութեան: Անապատ անուն փոքրիկ եկեղեցի մի ցոյց է տալի, որ այս վայրս կուսակրօնից բնակարան է եղել և թէ 1450 թուերին հաստատուած է: Անապատն նորոգել են Եղիազար, Յակոբ և Նահապետ կաթողիկոսները: Հին եկեղեցին մնաց պարսպի մի անկիւնում ձորաբաշի վրայ, որ կայ այսօր դուր փակ» (էջ 8):

1837 թվականին այդ հիմնավորց եկեղեցին վերջնականապես վերացվում է. «Փոքրիկ եկեղեցի կաթողիկոսական գոր ի 1837, ամի յարդարեցին տեղի հոգևոր ատենի վիճակին Երևանայ բաժանեալ յեր-

կուս սենեակս՝ մին խորհրդարան և միսն գրագրանոց» (դիվանատուն) (Ծախսաթունյան, էջ 147):

Չորագեղի անապատի հյուսիսային մասում եղել է նաև ս. Հակոբ եկեղեցին, որն ավանդաբար կառուցվել է հայ երթևեկ վաճառականների կողմից, «անապատի» շրջակա կաթողիկոսական իջևանատեղին և հարավից շինությունները կառուցվել և նորոգվել են Նահապետ Եղեաացի (1691—1705) և Հակոբ Ծամախեցի (1759—1763) կաթողիկոսների օրոք:

Քաաներորդ դարի սկզբներին «Չորագեղի անապատից» ոչինչ չէր մնացել, բացի ս. Սարգիս եկեղեցուց. «Չորրորդ կարևոր հնությունը, որ հիշվում է մեր պատմության մեջ, Չորագեղի անապատն է, որից այժմ բացի անունից, ոչինչ չի մնացել. անունն էլ միայն պահպանվել է ծերունի երևացիների հիշողության մեջ» (Երվանդ Ծախազիզ, Հին Երևանը, 1931, էջ 200):

Հիմա խոսենք Չորագյուղի անապատի հարավային մասում վաղուց անտի գոյություն ունեցող ս. Սարգիս եկեղեցու շինության և ծագման մասին: Հովհաննես Ծախսաթունյանց եպիսկոպոսը հետևյալ հավաստի տեղեկություններն է տալիս մեզ այս մասին:

«Դ մասն ի հարատյ տան կաթողիկոսարանին, յորում էր իսկական եկեղեցի ժողովրդոց յանուն արքայն Սարգսի զօրավարի շինեալ ի Նահապետ կաթողիկոսէ, այլ յաղագս կարի հնութեանն և վտանգաւոր գոյուն աղօթարացն ի նմա ժողովրդոց ըստ խարխուլ շինուածոյն՝ յամի 1835 ի ժամանակի պաշտման մերում հոգևոր այցելութեամբ տուաք քակել զայն բոլորովին ի հիմանց՝ հրամանա վեհապատ կաթողիկոսին, և նոր ի նորոյ ի նոյն տեղոյ ընդարձակ ևս հիմնադրութեամբ, տուաք կառուցանել զորմունսն որոյ շէնք հանդերձ չորս սեամբքն ի տաշածոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ հասանի գրեա թէ ի կատար յայսմ ամ»:

Ինչպես երևում է ամբողջ մեջբերումից, Նահապետ կաթողիկոսի շինած տաճարը իր չափերով զիջում էր Ծախսաթունյանց եպիսկոպոսի կառուցածին: Տաճարը սկսվել է շինվել 1835 թվականին և ավարտվել 1842 թվականին, 7 տարվա տևողությամբ, եթե «յայս ամ» բառերը Ծախսաթունյանցի գրքի հրատարակման թվականի հետ նույնացնելու լինենք:

Նահապետ կաթողիկոսի կառուցած շենքը պետք է 1691 թվականից հետո եղած լինի, իր գահակալության 14 տարիների ընթացքում, քանի որ Սիմեոն Երևանցին (1763—1780) Նահապետ կաթողիկոսի հա-

մար «Զամբո»-ում ասում է, «որ ի յերկիրն Երեանո որքան քարաշէն եկեղեցիք կան ըստ մեծի մասին ի սմանէ են շինեցեալք («Զամբո», էջ 26):

1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժը Երևանի պատմության մեջ տեղի ունեցած ամենակործանիչ երկրաշարժերից մեկն է: Ժամանակակիցները սուկայի գույներով են նկարագրում այն: Հողին են հավասարվում նշանավոր պատմական մի շարք հուշարձաններ և շատերն էլ խախտվում տեղից, այդ թվում և երևանյան մի քանի եկեղեցիներ: Այս մասին կա Չաքարիա Ագուլեցու վկայությունը: Նա գրում է. «1128 (1679) յունիսի դումն Երևան, օրը դ շաբաթ, և սհաթումն յանկարծակի քամի վեր կացաւ, որ յըրթում, որոտումն, այնպէս շարժ եղև, որ ական թոթափելու ամեն փլաւ, որ Նորայգայ մինչի Գոգչեն, Ղենաբեն մինչի էջմիածին ամեն վեր եկան: Երևանայ բ եկեղեցին, Երևանայ անապատն, Չորայգեղու եկեղեցին, Քեղարթու վանքն, Ամենայիբըրկին ամեն վեր եկա...» (Չաքարիա Ագուլեցու օրագրություն, 1938, Երևան, էջ 143):

Ծահաթունյանը նույնպես վկայում է. «Ոչ միայն սա, այլև միւս եկեղեցիք և այլ շէնք մզկթաց և պանդոկաց և այլն շինեցան զկնի մեծի երկրաշարժութեան դիպելոյ յամի 1679 յորում միջոցի, որ ինչ շինածք էին յառաջնոց կործանեցան իսպառ...» (Ստորագրություն, էջ 141):

1679 թվականից հետո, մինչև 1691 թվականը, մինչև Նահապետ կաթողիկոսի գահակալությունը, շինվել է ինչ-որ եկեղեցի ու Սարգսի տեղում, նույն անվամբ, որոշակի ո՛ր թվականին՝ դժվար է ասել, բայց որ ձեռագրաց հիշատակարաններից մեկում ու Սարգսի հիշատակվում է 1684 թվականին, դա փաստ է, քազմաշխատ բանասեր Երվանդ Ծահագիզն իր «Հին Երեվանը» աշխատության մեջ բերում է այդ հիշատակարանը (էջ 202—203):

«Փառք... եւ արդ եւ յետինս գրչաց եւ անարծանս ի քահանայից ստտանուն Աւետիս Երէցս... Աւարտեցի զսա ի քաղաքս իմ յերեան ընդ հովանեաւ սբ. Յակոբ Հայրապետին եւ սբ. Սարգիս, սբ. երկուերեսիս եւ սբ. կաթողիկէիս, ի հայրապետութե[ան] Տն. Յեղիազարու եւ առաջնորդութե[ան] սբ. Ամենայիրկչի լիեցի Յովհաննէս վարդապետի, ի դանութե[ան] քղքիս զայիսանիս, ի թուականութե[ան] Հայոց ՌՃԼԳ (1684)»: Ուրեմն ու Սարգիսը կար և գործում էր 1684 թվականին: Ինչպիսի՞ն էր, այն ո՞վ էր շինել կամ ո՞ր թվականից, դժվար է ասելը. ամենայն հավանականությամբ այն պետք է շինված լինի Եղիազար Այնթապցի (1682—1691) կաթողիկոսի օրոք և նրա հրամանով:

«Ծինեաց զբազում եկեղեցիս եւ արար զնորոգութիւնս քազմաց վանօրէից», ասում է Սիմեոն Երևանցին «Զամբո»-ում Այնթապցու մասին (էջ 25):

1450-ական թվականներին արդեն կուսակրոնից վայր էր «Չորագեղի անապատը» ըստ Մեարովք արքեպիսկոպոս Սեբաստյանի (տե՛ս Գեղարքունի, էջ 8): Ս. Սարգիս եկեղեցու տեղում, ուր կարող է վաղնջական ժողովուրդից որևէ արքատեղի կամ մատուռ մասնակներից որևէ արքատեղի կամ մատուռ եղած լինի, անհավանական չէ, սակայն կան գրավոր տեղեկություններ: Վերջերս, 1969 թ., երբ սկսեցին փորվել ու Սարգիս եկեղեցու հիմքերը, հիմնական վերաշինույթունը սկսելու համար, բացված նախահիմքերը շարված էին մեծ չափերի արքատաշարքերով (100×50 չափսի): Ինչպես հայտնուցի է հայ ճարտարապետության պատմության, նման մեծ և արքատաշարքերով պատ շարում էին հատկապես ավելի վաղ շրջանում:

Ս. Սարգիս եկեղեցու նախահիմքերում, պահպանված մեծ չափերի քարերը ոչ այլ ինչ են, եթե ոչ վաղեմի մի շինության մնացորդ քարեր, որը և մեզ ենթադրել է տալիս արքատեղիի հնադարյան ծագման մասին: Նույնիսկ վերջին շինարարական աշխատանքների ընթացքում, հին դռների և լուսամուտների քանդման և ընդարձակման ժամանակ, որպես բարավորներ օգտագործվել են մի շարք հին գերեզմանաքարեր (ս. Սարգսի շրջապատի), որոնցից մեկը ունի հետևյալ արձանագրությունը.

«ԱԲ ԽՉԱ Բարխս, պրն
Սարգարին թվ. Ռ.Լ.Բ.- (1583)»:

Այսպիսով՝ եզրակացություն.

- ա) Ս. Սարգիս եկեղեցին որպես հինավուրց արքատեղի կամ աղոթատեղի 15-րդ դարից առաջ արդեն գոյություն ուներ:
- բ) 1450 թվականին կուսակրոնից վայր էր Չորագեղի անապատը, որի մեջ մտնում էր ու Սարգիսը:
- գ) 1679 թ. երկրաշարժը կործանել է Երեվանի անապատը (որի մեջ և ու Սարգիսն էր մտնում):
- դ) 1684 թվականին հիշվում է ու Սարգիս եկեղեցին Երևանում գրված մի ձեռագրի հիշատակարանում: Ուրեմն նոր կառուցված էր այն, ամենայն հավանականությամբ Եղիազար Այնթապցի կաթողիկոսի նախաձեռնությամբ:
- ե) Նահապետ կաթողիկոսն իր հայրապետության 14 տարիների ընթացքում, ի շարս այլ եկեղեցիների, նոր ի նոր կառուցում է Երևանի ու Սարգիս եկեղեցին:

գ) Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի հրամանով և Ծահխաթունյանց եպիսկոպոսի առաջնորդության օրոք և նախաձեռնությամբ 1835-ից մինչև 1842 թվականը հիմքից խարխլված և Սարգիսը քանդվում է և հիմնովին շինվում:



Մեր տարաբախտ, բայց և հերոսական պատմության ոսկե էջերում և Սարգիս եկեղեցին իր ուրույն տեղն ունի և անցյալի արյունոտ տարեգրության միջից նա նայում է մեզ որպես կենդանի և մեծ վկա:

1724 թվականի ձմռանը օսմանյան մի խոշոր բանակ պատրաստվում էր հարձակվել Երևանի վրա: Եղվարդի մոտ պարսիկները պարտություն են կրում և ամրանում Երևանի քերդում: Օսմանյան բանակի դեմ դուրս է գալիս մի ուժ, որը երբեք չէին նախատեսել թուրք փաշաները. դա հայ տարրն էր, հայ ժողովուրդը: Արդուլակ փաշան և օսմանյան կանոնավոր զորքերը (75.000) մոտեցան Երևանին: Հայերը, կազմակերպեցին ուժեղ ինքնապաշտպանություն. թուրքական բանակի գրոհները 60 օր շարունակ ետ էին մղվում: Գիշերվա ուշ ժամին և Սարգիս եկեղեցում տեղի է ունենում մի կարևոր խորհրդակցություն Գրիգոր վարդապետի գլխավորությամբ:

Ահա թե ինչ է գրում դեպքերին ականատես հայ պատմիչը՝ Աբրահամ Երևանցին. «Վարդապետ ոմն էր ի քաղաքի անդ, Գրիգոր անուամբ, սա մտեալ ի վանս արքայն Սարգսի, որ ի Ձորագիւղ անուանեալ թաղի անդ է, գրագմութիւն ժողովրդեան հայոց կոչեալ ժողովեաց յայն վանս, և յառաջնում ժամու գիշերոյն սկսան խորհուրդ առնել մեծամեծքն ընդ վարդապետին և ասեն. «Զի՞նչ արասցուք վաղիւն զմեզ զամենեւեան ի սուր սուսերի մաշե օսմանցիւն և զկանայս և զմանկունս մեր ի գերութիւն վարէ»» (Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն, Երևան, 1938, էջ 16): Եվ ահա ժողովուրդը Գրիգոր վարդապետի ղեկավարությամբ դիմում է Կոնդ թաղամասի հայ բոշաներին՝ օգնելու իրենց օրհասի այդ օրերին: Հավաքվում են 9.448 հոգի զինվորագրվածներ Կոնդից և շրջակա շրջաններից իրենց ղեկավարներով: Բոլորը հավաքվում են Ձորագյուղում, միանում քաղաքի հերոս պաշտպաններին: Նրանք եկել էին, ասում է պատմագիրը, «պատերազմել վասն անձանց և վասն կանանց և որդւոց իրեանց» (էջ 17):

Ակսվում է անեղ գրոհը, «յամեհանյն կողմանց իրրև զաւագ ծովու բազմութեամբ պատեալ, պաշարեալ զինքեանս կլանել (էջ

20), ասում է պատմիչը, իսկ հայերը պաշարված էին ինչպես ձկները ցանցի մեջ:

Ոչինչ չէր մնում անելու հայերին, եթե ոչ սուր ի ձեռին պաշտպանել իրենց պատիվը, հողը, հայրենին: Վարդանանց օրերը կրկնվում էին մի պահ. «Ապա վարդապետն այն ժողովեալ զժողովուրդն յեկեղեցիս, մատոյց զպատարագ և խոստովանութեամբ մեղաց իրեանց պատրաստեցան և հաղորդեցան ի կենարար մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ և կային յիւրաքանչիւր տեղիս պատրաստութեամբ, ուր պիտոյ էր կալ» (էջ 21):

Մյուս օրը, վաղ առավոտվանից, նակատամարտը շարունակվում է մինչև երեկո: Հերոսական և անձնուրաց էր հայերի դիմադրությունը: «Խառնեցան ընդ միմեանս հայքն և օսմանցիքն և այն չափ եղև հեղումն արեան, մինչև կարմրանալ Չանգու գետոյն և երկրին, որ առ գետովն և հոտ արեանց եւ դիականց կոտորելոցն զքաղաքն բովանդակ մինչև ի հեռատր տեղիս լցին» (էջ 21):

Հերոսաբար ընկալ Երևանը: Հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերից է Երևանի այս անօրինակ պաշտպանությունը: Դա 18-րդ դարի Ավարայրն էր, Ղևոնդ Երեցի փոխարեն այս անգամ Գրիգոր վարդապետն էր մի ձեռքում խաչ և մյուսում սուր բռնած, և Սարգիս եկեղեցու արժանավոր միաբանը:

Երևանի հերոսական ինքնապաշտպանությունը նպաստեց, որ Սյունիքում հայերը ժամանակ շահեն, և ապա հանդես գան Ղարաբաղի հայ մեկիությունները Դավիթ-Բեկի գլխավորությամբ և փառավոր նոր էջեր գրեն մեր ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ:



1827 թ. հոկտեմբերին, Երևանի ազատագրման օրերին, և Սարգիս տաճարը նորից պատմական վկան էր օրվա դեպքերին և իրադարձություններին:

Մեծ հաղթանակի օրվա առթիվ հայոց բոլոր եկեղեցիներում գոհաբանական մաղթանքներ և արարողություններ են կատարվում (տե՛ս Թ. Հակոբյան, Երևանի պատմություն, 1801—1879, Երևան 1959, էջ 338):

Ամենուրեք ցնծություն էր և ուրախություն: «Բերդի մեջն ու չորս կողմը որ ասեղ քցեիր, գետին չէր հասնի, աշխարհքը իրաւոցով էր դիպել: Աչք էր՝ որ խնդում էր ու լալիս, քերան էր՝ որ խնդում էր ու օրհնություն տալիս, ազգսկան, բարեկամք էին՝ որ իրար փաթաթված մնացել էին փտա-

ցած: Լեզվի տեղակ արտասուներն էին նրանց էրված սիրտը հովաքնում» (Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, հ. 3, 1948, էջ 181), գրում է Աբովյանն այդ օրերի համար:

Հայ եկեղեցին իրավամբ այդ օրերին կիսուն էր իր ժողովրդի ուրախությունը, որովհետև այդ մեծ հաղթանակի կազմակերպիչներից մեկն էր նա՝ հանձին հայրենյաց պաշտպան Ներսես Աշտարակեցու: Ըստ Խ. Աբովյանի վկայության, Երևանի ս. Սարգիս եկեղեցում համաժողովրդական հանդիսությամբ, կրոնական արարողություններով հոգեհանգստյան վերջին կարգն է մատուցվում նաև «Վերք»-ի հերոս Ջիվան Աղասու վրա, որը հաղթանակի վերջին թույլեներին ողբերգականորեն նահատակվում է: Խ. Աբովյանը «Վերք»-ում իրական գույներով ու հայրենասիրական վառ շնչով գրել է ժամանակի այս մեծ ու պատմական իրադարձության մասին, իրադարձություն, որը միաժամանակ ս. Սարգիս եկեղեցու հերոսական տարեգրության փառավոր էջերից մեկն է կազմում (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հտր. 3-րդ, Երևան, 1948, էջ 185—188):

Աբովյանն իր վեպում քանիցս հիշատակում է Չորագետի անապատը, որպես առաջնորդակետ եկեղեցի (էջ 79 և 186):

Մեսրոպ արքեպ. Սմբատյանցն իր «Տեղեկագիր Գեղարքունի ծոծալարդ գաւառի» աշխատության մեջ տալիս է Երևանի թեմի առաջնորդական փոխանորդների ցուցակը՝ սկսած 1830 թվից: Այդ ցուցակը 1830—1895 թթ.՝ մոտ 65 տարվա հաջորդականություն է առաջնորդական փոխանորդների, որոնք փայլուն դեմքեր էին հայ եկեղեցու պատմության մեջ և որոնց նստոցն ու աշխատավայրն էր դարձել Չորագետի անապատը, որ է ս. Սարգիսը իր շրջապատով:

Ց Ո Ւ Ց Ա Կ

Առաջնորդաց հացը Երևանա թեմի սկսել 1830 ամի

Անունը և Ազգանունը Առաջնորդաց	Ամբ
1 Զաքարիա եպիսկոպոս Գիւլաստանց Տըփլիսեցի	1830
2 Յովհաննէս եպիսկոպոս Ծախաթունեանց	1835
3 Ստեփաննոս արքեպիսկոպոս Արղութեանց Տփլիսեցի	1836
4 Փոխ-թեմակալ Ստեփաննոս վարդապետ Զոհրապեան	
5 Գրիգոր եպիսկոպոս Յովեանց Վաղարշապատցի	1860
6 Մովսէս եպիսկոպոս Մաղաբեան Գանձակեցի	1862
7 Սարգիս վարդապետ Տ. Գաւապեան	1864

8 Ստեփաննոս եպիսկոպոս Զոհրապեան վերքատին	1864
9 Աբել եպիսկոպոս Մխիթարեանց Վաղարշապատցի	1865
10 Յովհաննէս եպիսկոպոս Արշարունի	1866
11 Մկրտիչ եպիսկոպոս Բարամեանց Երևանցի	1866
12 Սերովբէ եպիսկոպոս Արարատեան վաղարշապատցի	1867
13 Մեսրոպ վարդապետ Սմբատեանց նախջեւանցի	
14 Մկրտիչ եպիսկոպոս Բարամեանց վերատին	1870
15 Եղիազար արքեպիսկոպոս Արնցեցի	1871
16 Գեորգ եպիսկոպոս Սուրենեանց Տփլիսեցի	1873
17 Սուքիաս եպիսկոպոս Պարզեանց նախջեւանցի	1880
18 Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանց վաղարշապատցի	1885
19 Կիրիլ եպիսկոպոս Արապեան Կելեցի	1892
20 Ամանիս եպիսկոպոս Համազասպեանց երեսանցի	1895

Մեսրոպ արքեպիսկոպոսի կազմած գլխավորագիրքը եթե շարունակելու լինենք մինչև մեր օրերը, կստացվի մոտավորապես հետևյալ պատկերը: 1910—1924 թվականը Արարատյան թեմի Երևանի փոխանորդ է նշանակվում Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը (հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս):

1924—1929 թթ.՝ Հակոբ ալլազ քահանա տաշվանքյանը:

1930—1937 թթ.՝ Արտակ արքեպիսկոպոսը:

1937 թվականից մինչև 1957 թվականը Արարատյան թեմը կառավարվում է Ամենայն Հայոց Հայրապետների կողմից նշանակված առաջնորդական փոխանորդ քահանա-հայրերի կողմից:

1957 թվականից մինչև 1972 թ. Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի նրամանով Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակվում տ. Վահան եպիսկոպոս Տերյանը:

Իսկ սկսած 1972 թվականից ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ է հաստատվում տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

1842 թվականից մինչև 1969 թվականը ս. Սարգիս եկեղեցին ենթարկվել է մասնակի վերանորոգությունների: Եկեղեցու տանիքը և գմբեթը թիթեղապատվել է Գևորգ Զ.

և Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսների խնամածությամբ: Գևորգ Զ կաթողիկոսի ժամանակ է կառուցվել նաև եկեղեցու ներսում վերնատունը:

1969 թ. ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ա Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սըրբազնագույն և շինարար կաթողիկոսի անմիջական նախաձեռնությամբ և հրամանով, ինչպես և բարեխնամ հայրենի կառավարության թույլտվությամբ սկսվեցին և շարունակվում են ս. Սարգիս եկեղեցու հիմնովին և ամբողջական վերաշինման աշխատանքները:

Կատարվելիք ծախսերը իրենց վրա վերցրեցին լոկոնաբնակ ազգային բարերար տիար Սարգիս Զյուրքչյանը և յուր զավակները՝ հավերժ հիշատակ թողնելով դարերին յուրյանց հիշատակարժան և հոգեշահ գործը:

Ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման աշխատանքների մասին կգրվի առանձին ու հանգամանորեն: Ծուտով, շատ շուտով կավարտվեն ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման աշխատանքները և նորաշեն տաճարի արևելյան պատին մեարդայան երկաթագրերով ժամանակին և դարերին ի պահ կտրվի հիշատակարան-արձանագրության ավանդական ձևը. «Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Առաջնոյ Հայրապետին Ամենայն Հայոց ավարտեցաւ...»:

* * *

Մի քանի խոսք ս. Սարգիս եկեղեցու բնական դիրքի մասին: Մեր նախնիք, ինչպես հայտնի է, ունեին մեծ գեղարվեստական ճաշակ վանքերի և եկեղեցիների տեղադրման հարցում, տեղանքի ամենագեղեցիկ, տեղանքին իշխող, աստվածադիր կետում գետեղում էին Աստծո տաճարները:

Ս. Սարգիս եկեղեցին բացառիկ դիրք

ունի այդ տեսակետից, այն կարծեք Հրազդանի վրա կախված վիթխարի ժայռեղեն ամրոցների բնական շարունակությունն ու լուծումն է, հեռու Մասիսների հետ կազմելով մեկ ամբողջականություն:

Այս առթիվ գեղեցիկ տողեր ունի Հ. Թումանյանը.

«Ծառ գեղեցիկ է տեսարանը և Երևանի առաջնորդարանի պատշգամբից: Ես շարունակ այնտեղից հիանում էի ու մտորում:

Հենց հասա Երևան, իջա թե չէ, պատռշգամբում նստեցինք, աշուղն էլ մեր ետևից մտավ:

Ես չեմ մոռանալ այդ րոպեն: Ունեիրիս տակ ներքև պղտոր, մոնչալով, ոլորապտույտ անցնում է պատմական Հրազդանը (Աբովյանի սիրած Ջանգին), հիշում եմ Աբովյանի Ջանգվին նվիրված կրակոտ տողերը, հիշում եմ Ալիշանի՝

«Հրազդան, գետակդ իմ հայրենի,
Հրազդան, ջըրիկդ իմ անուշիկ...»:

Նայում եմ Արարատյան դաշտին, մտքովըս անց են կենում մեր պատմության փառավոր շրջանները, կենդանանում են հույակապ հերոսները, որ ապրել ու թաղվել են այդ դաշտում, սրտիս խոսում են սքանչելի լեգենդները, որ դեռ ապրում են այստեղ: Վերջապես դեմ ու դեմս ամպերից բարձր փայլատակում է Մասիսը, ծերունու քմահաճույքով մին մթնում, մուսլում, մին բացվում ու ժպտում, բայց միշտ սիրուն, միշտ խորհրդավոր...» (Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1945 թ., էջ 268—269):

Այսպիսին է ս. Սարգիսն իր պատմական անցյալով, իր դիրքով, տեղով և անունով, մեր հիմնավորց պատմության և հավատքի խոսուն և անհողողող հին և նոր վկան:

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳ ԲԷՆ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

